## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**11 օգոստոսի 2014 թվականի N 40-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿՈՌՆԻՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ՀԱՆՁՆՈՒՄ – ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2014թ. օգոստոսի 11-ի <<Ա. Բալասանյանի անվան Կոռնիձորի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության՝ օրենսդրության պահանջների համապատասխանության և ընտրված տնօրենի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու մասին N 127-Ա որոշման, **կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1. 2014թ. օգոստոսի 12-ից լուծել <<Ա. Բալասանյանի անվան Կոռնիձորի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Գրավիկ Դանիելյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2.Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Կոզմանով Կառլեն | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ) |
| Ասրյան Աշոտ | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ |
| Բալայան Իննա | Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ |
| Ծատրյան Արման | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետ |
| Հովհաննիսյան Սուսաննա | <<Ա. Բալասանյանի անվան Կոռնիձորի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն (ընդունող) |
| Դանիելյան Գրավիկ | <<Ա. Բալասանյանի անվան Կոռնիձորի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար (հանձնող) |

3. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

4.<< Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

***ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ*** ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

*2014թ. օգոստոսի 11*